Արշակ Չոպանյան

Կնախանձիմ երջանիկ

Կնախանձիմ երջանիկ
Ջգեստներուդ, որ մոտեն
Իրենց ծալքին մեջ փափկիկ
Քու մարմինդ կգրկեն:

Կնախանձիմ քու ոտքիդ
Մանրիկ քնքուշ մուճակին
Ու մանյակիդ մարգրիտ,
Որ կը պարուրե վիզդ անգին.

Կնախանձիմ այուքերուն,
Որ մազերդ կշոյեն,
Անբիծ աստղին իսկ սիրուն,
Որ կժպտի քեզ վերեն:

Կատեմ երկինքն, ուր աչքերդ
Հափշտակված կթաղվին,
Ու մատյանը հրաշակերտ
Ու կը սուզվիս հոգևին:

Խոհերն որ քեզ կպատեն
Ու երազներն անուշակ,
Որ միտքդ ինչմե կանչատեն,

Կատեմ հեռով մը վայրագ:

Հավտա՛, Աստված իսկ կ’ատեմ,
Խորհելով որ անոր, մերթ,
Աղոթքիդ մեջ երկնաճեմ,
Կուղղես քու սիրտդ ու աչքերդ: